ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

№ 03-1230
"22" մարտի 1994 թ.

375002, Երևան, Մոսկովյան փ. 35
Հեռ. (8852) 53-07-41
Ֆաքս՝ (8852) 53-49-02

Հայաստանի Ամերիկյան համալսարանի
պրորեկտոր՝
պ-ն Մ.Քուչաքյանին

Մեծարգո պարոն Քուչաքյան

Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ Բնության և շրջակա միջավայրի պահպանության նախարարության խնդիրների մեջ է մտնում շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի մշակման կազմակերպումը:

Մասնավորապես ներկայումս գոյություն ունի իրավական և մեթոդական բնույթի բացթողում՝ արդյունաբերական վթարների ռիսկի գնահատման և այդ բնագավառում պետական կառավարման իրականացման բնագավառում:

Մեր տեղեկությունների համաձայն Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Շրջակա միջավայրի ուսումնասիրման և կառավարման կենտրոնը զբաղվում է վթարների ռիսկի գնահատման ուսումնասիրություններով:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը, ինչպես նաև մեր նախկին պայմանավորվածությունը համագործակցության վերաբերյալ, առաջարկում ենք այդ աշխատանքը կատարել միասնական՝ որոշակի ձեռնարկությունների օրինակի վրա /օրինակ, ,,Նաիրիտ,, գիտաարտադրական ձեռնարկության/, վերջնական նպատակ ունենալով համապատասխան նորմատիվային և մեթոդական փաստաթուղթ մշակել և ներդնել այն պետական կառավարման բնագավառում:

Հարգանքներով,

փոխնախարար [signature] Ս.Ավետիսյան